

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խոսքերատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լուրով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, ապրիլի 26-ին, Քամայեանց եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 12-ին,
և ապա Խօջիվանքի գերեզմանատանը, հոգեհանգիստ կը կատարվի.

ԲԱՅՅԻՒ

մահվան տասնամեայ տարեդարձի առիթով:

1—1

Կիրակի, ապրիլի 26-ին, Մոջիւ եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 12-ին, կը
կատարվի հոգեհանգիստ.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՒԴԱԳԵԱՆԻ

Երջատակին և ապա տեղի կրօնական նշան եկեղեցու բազում, նրա մահաբանի բացումը:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ոգնե՛ք որ վերադառնան. Փաղիշահ—գերի.
—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բազումի նախարարի
նախնայները XII ժողովը. Նամակ Կարսից. Նա-
մակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ.
Պատերազմ. Նամակ Բուլղարիայից. Նամակ Պարս-
կաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.
—ՀՆՈՒԱԿԻՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կաթօլիկ-հայերի ազգային վար-
չութիւնը Կ. Պոլսում.

ՕԳՆԵՆՔ ՈՐ ՎԵՐԱԳԱՌՆԱՆ

Բարձրագոյն հրամանը, որ երէկ տպւեց
«Մշակ» մէջ, կենսական նշանակութիւն
ունի թիւրքահայ գաղթականների հա-
մար: Բարձր կառավարութիւնը մի տարի
ժամանակ է տալիս գաղթականներին ի-
րանց հայրենիքը վերադառնալու համար
և այդ նպատակով, որքան հնարաւոր է
գիւրթութիւններ է տալիս նրանց, ազատե-
լով մաքսային ձեւակաւութիւններից և
յանձնարարելով կովկասեան կառավարչա-
պետին իր մօտ եղած գրամական գու-
մարներից միջոցներ տալ վերադարձողներին:
Կովկասեան բոլոր հայերի առաջ այժմ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱԹՈՒԻԿ-ՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
Կ. ՊՈԼՍՈՒՄ

«Մշակ» արդէն հաղորդեց թէ Կ. Պոլսի կամ
աւելի ճիշդ՝ Թիւրքիայի կաթօլիկ հայերը ի-
րանց յատուկ սահմանադրութեան համաձայն
վերջերս կատարեցին իրանց ազգային վար-
չութեան պաշտօնավար մարմինների ընտրու-
թիւնը: Աւելորդ չենք համարում այս առիթով մի
քանի մանրամասնութիւններ հաղորդել ի նկատե-
ղունքը ընտրութիւն մասնաւոր, որ ընթերցողներից շա-
տեղը ընտրութիւն ծանօթութիւն չունեն այս
խնդրի հետ:

Երբ հռչակաւոր Հաստատման կարգինալ նը-
շանակվելով կաթօլիկական — պատրիարքական
աթորոք մնալ թափուր, կաթօլիկ հայերը օրինա-
ւոր պահանջ յայտնեցին, որ իրանց նոր կաթօ-
ղիկութիւնը ոչ թէ Հռոմում սահմանվի, այլ նա
ընտրվի ժողովրդի և հոգեւորականութեան
քուէարկութեամբ: Ներկայ պայքը՝ Լուսն
XIII, որ ազգային և ժողովրդական իրաւունք-
ներին միտ պաշտպան է հանդիսանալու, իրանց
իր նախորդի՝ Պիոս IX-ի կարգադրութիւնը և
ընտրութիւնը կատարվեց հայ եկեղեցու սովոր-
ութեան և կարգերի համաձայն: Ընտրվեց
Ստեփաննոս արքեպիսկոպոս Աղաբեան, որ Հա-
ստատման տեղակալից յետոյ վարում էր կաթօղի-
կական տեղակալի պաշտօնը:—Աղաբեան ինքն
նա աշխատել էր, որ ազգային ընտրու-
թեան կարգը վերահաստատվի, և տարակց
չէ կար, որ այդ եղանակը պիտի հաստատ պահ-
վէր նաև ազգային համար: Իրօք, այդ խնա-
սով էլ յատուկ գրաւոր ապահովութիւն եկաւ:

Գրված է մի մեծ պարտականութիւն:
Որքան մենք գիտենք, թիւրքահայ գաղ-
թականները ամենայն ուրախութեամբ
պատրաստ են վերադառնալ հայրենիք:
Միակ բանը, որ կարող է արգելք հանդի-
սանալ, միջոցների պակասութիւնն է. և
մեզ յայտնի են շատ գաղթականներ, ո-
րոնք տուն են վերադարձել, հէնց որ ձեռք
են բերել ձանապարհածախս: Ձր պէտք է
մոռանալ որ մեր երկրում ապաստանած
թիւրքահայերը եկել են բոլորովին մերկ
ու գատարկ, չունենալով ոչ միայն ապրե-
լու միջոց, այլ և զգեստ անգամ: Օտտ եր-
կու տարի ապրելով մեզ մօտ, նրանք, ինչ-
պէս յայտնի է ամենքին, մեծ մասամբ
մնացին առանց որ և է գործի, առանց
աշխատանքի և գոյութիւն պահպանելի
համարեա բացառապէս բարեգործութեան
հայրենիքում հացով: Այժմ նրանք պիտի
վերադառնան: Մեր պարտք է օգնել, որ
վերադառնալիս էլ նրանք այնպէս չը լինեն,
ինչպէս գալիս: Բարձրագոյն հրամանի այն
կէտը, որ խօսում է վերադարձողներին
նպատակ տալու մասին, ցոյց է տալիս որ
մեր եղբայրները համեմատաբար լաւ վի-

ձուովն՝ Լուսն XIII-ի անունից և կարգադրեց ը-
տր կաթօլիկ եկեղեցիներում:

Այս առաջին անգործութիւնից յետոյ, Կ. Պոլսի
հայ-կաթօլիկները, որոնց ի մէջ՝ ի դէպ ասենք,
բաւական թիւով նշանաւոր անձինք են եղել և
կան, ցանկացան ունենալ սեփական որոշ կա-
նօնադրութիւն իրանց ներքին գործերը վարելու
համար:—Երկար խորհրդակցութիւններից յետոյ
1888-ին հարկ եղած ծրագիրը կազմվեց և ներ-
կայացվեց օսմանեան կառավարութեան, որ ան-
հայտ փոփոխութեամբ հաստատեց և հրամայեց
գործադրել: Այս ծրագիրը, որ կրում էր «Ազ-
գային կանօնադրութիւն» անունը, մօտաւորա-
պէս տալիս էր այն, ինչ որ ունէին լուսաւորչա-
կան հայերը «Ազգային կանօնադրութեան»:
Ազգային գործերի գերազույն վարչէ կամ հսկող
մարմին ներկայանում էր «Ներսիսիանական»
ժողովը, որ կազմւում էր նաև «Առաքանուց ժո-
ղով»: Այս ժողովին երեսփոխաններ էին ուղար-
կում գաւառների և Կ. Պոլսի թեմերը: Ժողովին
նախադրանքում էր պատրիարքը: Ներսիսիանա-
կան ժողովը ընտրում էր «Ազգային վարչու-
թիւն» 12 հոգուց բաղկացած և տալիս էր նրան
պարագաներին յարմար հրահանգներ: Այս «Ազ-
գային վարչութիւնը» ամփոփում էր իր մէջ
գործադիր իշխանութեան բոլոր իրաւունքները:
և վարում էր Թիւրքիայի կաթօլիկ-հայերի վե-
րաբերեալ բոլոր ներքին գործերը. ինքն էր
ընտրում նաև օժանդակող խորհուրդներ, վար-
չութեան զանազան ճիւղերի համար, ինչպէս
կրթական, դատաստանական, երևտնից, բարե-
գործական հաստատութիւնների խորհուրդներ,
որոնք պատասխանատու էին իրան, իսկ Ազգա-
յին վարչութիւնն էլ իր կողմից պարտաւոր էր
իր գործունէութեան համար հաշիւ տալ «Առա-
քանուց ժողովին»: Մասնաւոր թաղերի դպրոց-
ները և եկեղեցիները անտեսական գործերը վա-
րելու համար ծխականները կողմից ընտրելի

ձակի մէջ կը գնան իրանց հայրենիքը,
եթէ կառավարչապետի տրամադրու-
թեան տակ գտնվող գուժարը բաւարար
լինի այն հաջգին բաղաւթեան համար,
որ պիտի հեռանայ Կովկասի սահմաններից:
Ուրեմն, մեր պարտքն է միջոցներ տալ:

Բայց այդքանը բաւական չէ: Կառավա-
րութիւնը կօչնէ այն գաղթականներին,
որոնք իրանց յօժար կամքով կը վերադառ-
նան հայրենիք: Մեր պարտքն է հասկացնել
գաղթականներին, որ անհրաժեշտ է հա-
մաձայնութիւն տալ և ձանապարհվել, չը
սպասելով մի տարվայ ժամանակամիջոցին:
Նա շատ կարեւոր է իրանց, գաղթականնե-
րի համար, թէև, դարձեալ կրկնում ենք,
որ թիւրքահայը ինքն էլ ցանկանում
տուն վերադառնալ և նրան պակասում են
միայն միջոցներ:

Ձր մոռանալ, որ գաղթականը իր հայ-
րենիքում չը պիտի յոյս գնէ ձրի հացի,
բարեգործութեան, ուրիշների տուած ո-
գործութեան վրա, այլ ինքն իր ձեռքով
պիտի հաց աշխատէ, հերկելով իր գաշոը:
Նրա ապրուստի միակ միջոցն այդ է: Եւ
ինչպէս կարող է ապրել, եթէ դարձեալ
դատարկ ու մերկ վերադառնալ իր տունը:
Պարզ է, ուրեմն, որ քանիցս օջախը վե-
րանորոգելու միակ յոյսը դարձեալ մենք
ենք: Միայն մենք կարող ենք հնարաւորու-
թիւն տալ, որ նա կապվի իր հողի հետ,
գործ սկսէ, տուն հիմնի: Իսկ եթէ մենք
կը մնանք անտարբեր, եթէ դարձեալ կը
սկսենք պաշտել մեր քսակները, այն ժա-
մանակ թիւրքահայի վերադարձը նոյն ա-
ղէտը կը լինի, ինչպէս որ գաղթելն էր աղէտ:
Ուրեմն հաց տանք, շոր ու փող տանք
մեր եղբայրներին, որոնք ժամանակաւոր
հիւրեր են մեզ մօտ, և որքան կարելի է
չուտով ձանապարհենք նրանց:

Թիւրքահայի բախտը իր հայրենիքումն
է: Կրտում, օտարութեան մէջ, նա թը-
շուառ պանդուխտ է, մուրացկան, մարդ-
կային պատուից ընկած: Ոգնե՛ք, որ ամեն-
քը վերադառնան:

«Քաղական հոգաբարձութիւններ» հիմնվեցին և
վերապէս պատրիարքարանի և ազգային հա-
ստատութիւնների պիտոյքը հողաւոր համար ա-
ռանձին «ազգային տուր» հաստատվեց: Այս
կանօնադրութիւնը մեծ եռանդ առաջ բերեց ժո-
ղովրդի մէջ և նրա վրա մեծ յոյսեր սկսան դրվել:
1888 թվ. նոյեմբերի 20-ին գումարվեց կա-
թօլիկ հայոց անդրադիւն երեսփոխանական ժո-
ղովը, որ կանօնաւոր կերպով կատարում էր վրա
դրված պաշտօնը: Ընտրվեցին Ազգային վարչու-
թիւնը և ապա միւս պաշտօնավար մարմինները,
և գործն սկսեց առաջանալ, թէև ոչ առանց
թերութիւնների:

Վերջին տարիների աճաւոր դէպքերի ժամա-
նակ կաթօլիկ-հայոց Ազգային վարչութեան և
Աղաբեան պատրիարքի մէջ կարծիքների անհա-
մաձայնութիւն գոյանալով վարչութեան անդամ-
ները հրաժարվեցին գործել պատրիարքի հետ:
Մի կողմից այս պարագան, միւս կողմից կառա-
վարութեան թշնամական հայեացքն առհասա-
րակ դէպի հայկական որ և է գումարում, շատ
ձգձգեցին գործերի կանօնաւոր ընթացքը և «Ա-
ռաքանուց ժողովին» երկար ժամանակ իրաւունք
չէր տրվում գումարվել, ճիշդ ինչպէս չէր գու-
մարվում նաև լուսաւորչականների «Ազգային
ընդհանուր ժողովը»: Այդ սոսկալի օրերում գոր-
ծերը վարում էր մի առժամանակեայ վարչա-
կան ժողով, կամ աւելի ճիշդ՝ միմիայն Աղա-
բեան պատրիարքը իր քանի մի խորհրդակա-
նների աջակցութեամբ, որոնք էին իր փոխաւոր-
ը՝ Աղաբեան արքեպիսկոպոս, Կարապետ Գա-
րաբաշ և Աշճեան վարդապետ: Այսպէս տեղեց 3
տարի, մինչև որ անցեալ տարվայ վերջը սուր-
թանք վերջապէս թոյլտուութիւն հնարեց, որ
երեսփոխանական ժողովը շարունակէ իր գումա-
րումը, բայց միմիայն ընտրութիւնների կատարե-
լու համար:—Այս հիման վրա՝ թէ Կ. Պոլսից և
թէ գաւառներից ընտրվեցին «Առաքանուց ժոլո-

ՓԱՒԻՇԱՀԸ—ԳԵՐԻ

II

Նշել են դէպքեր, երբ սովորաբար պատրաստ է
եղել նոյն իսկ դոնէլ իր վեհապետական իրա-
ւունքները. այսպէս, 1893 թվ. գերմանական
երկաթուղային ընկերութիւնը պահանջում էր
գերմանացիներին տալ երկաթուղու երկու կող-
մերում գտնվող հողային աճալին տարածութիւն-
ները և ապառիւ այնտեղ ապրող դաղթականնե-
րին ամեն մի հարկից: Եւ սուրբանոր պատրաստ
էր կատարել գերմանացիների պահանջը, եթէ
այդ ծայրայեղ գերմանաբարութիւնը արտունջ
չը յարուցանէր մահմաականների մէջ: Վճռված
բան է, որ Փոքր-Ասիայում երկրորդ Գերմանիա
հիմնողները պիտի լինեն երկաթուղային ընկե-
րութիւնները: Եւ այդ պատճառով գծերի շրջա-
կանները ուսումնասիրվում են ամենայն խնամ-
քով, այնտեղ բացվում են գերմանական դպրոց-
ներ, որ պարտաւոր են սովորել երկաթուղու
ծառայողների օրինիները, եթէ գերմանացի էլ չը
լինեն: Ֆրանկֆուրտում Herrmann ասաց, «Գեր-
մանիան մեծ աղուլութիւններ ձեռք բերեց Փոքր-
Ասիայում: Օրինակ, Էսկի-Շէնէրի փողոցներում
շարունակ լսվում է գերմանական խօսակցու-
թիւնը: Այնտեղ կան երկու գերմանական դա-
րեջրատուն և քննտրան՝ գերմանական ցուլա-
նակադրով»:

Գերմանացիների արշաւանքը դէպի Թիւրքիա
օր օրի վրա նկատելի է դառնում. աղ, մասա-
ւանդ քաղաքներում է աչքի ընկնում: Մինչև
յոյն-թիւրքական պատերազմը Թիւրքիայում ա-
մեն ամիս բնակութիւն էին հաստատում 50 նոր
գերմանացի գաղթականներ. այժմ լինում են
500-ով եկողներ: Կրտնք մանր փաճառակներ
են, արհեստաւորներ: Անցեալ մարտ ամսին Կ.
Պոլսում կային 113 գերմանական մանր խա-
նութիւններ, մինչդեռ ֆրանկացիները ունէին մի-
այն 28 հատ: Էսկի-Շէնէրում, ուր գտնվում են
անատոլիական երկաթուղիների գլխաւոր ար-
հեստանոցները, կազմվել է մի գերմանական քա-
ղաք, որ յետ է մղել թիւրքական քաղաքը: Նկ-
ւորները ձեռք են առել բոլոր գործերը:

Մի և նոյն ժամանակ դիպլոմատիան իր գործն
է տեսնում: Այսպէս, նա համոզեց Արդիւ Հա-

վի՝ անդամներ, ազգային կանօնադրութեան
տրամադրութեան համաձայն:

1897 ղեկավարեցին վերջացան երեսփոխանա-
կան ընտրութիւնները. ընտրվեցին 8 եկեղեցա-
կան և 48 աշխարհական երեսփոխաններ, ո-
րոնցից 14-ը գաւառներից: Հայաստանից և
Փոքր-Ասիայից անուանաւ պէս երեսփոխան
ուղարկել էին ժողովին՝ Աղաբեան, Սեւաստիա,
Կարին, Անտարիա, Ջմիւռնիա, Բրուսա, Մուշ,
Մալաթիա, Խարբուզ, Թոքադ, Կիարեքէր, Մա-
րաշ, Բէյրութ և Տրապիզոն քաղաքների և շրջ-
ջակայքի հայ-կաթօլիկ հասարակութիւնները.
գաւառական երեսփոխանները կամ բնիկ պոլսե-
ցի են կամ պոլսաբնակ գաւառացի:—Ընտրված
«առաքանուց» մէջ կան շատ յարգելի անձնա-
ւորութիւններ, ինչ նաև շատ անպիտաններ, ինչ-
պէս միշտ լինում է: Ներսիսիանական ժողովին
անդամ են ի միջի այլոց՝ Յովհաննէս Էֆէնդի
Սալիզ, որ կայսերական անձնական գանձի մի-
նիստը է (յայտնի է իրեն ընտրի Ֆինանսիստ
և լաւ հայկաբան), Աղաբեանի Յովհ. Էֆէն-
դի, որ Օսմանեան վարդապետի սահմանադրու-
թեան ժամանակ թրքական պատգամաւորների
ժողովի փոխ-նախագահ էր, Գույուսեան Պետ-
րոս Էֆէնդի, սէնատոր, Թրնիկը Եսկի փաշա,
Նաֆիլեան Անտոն փաշա, Տիգրան ձիւլէկեան
(խմբագիր հայաստա թրքաբարբառ ձէլքիտի է
Եւրպիէ ամենօրեայ լրագրի), Յովհ. Թուա-
կեան (խմբագիր Մէ ճմուռայի Ախպար թեր-
թի՝ նոյն ձևով հրատարակող), Կարապետ Գա-
րաբաշ (կաթօլիկ հայոց) «Ս. Գրիգոր Լուսաւո-
րիչ» միջնակարգ դպրոցի տեսուչ, Թոմաս
Թէրզեան, համակրելի գրագէտ—բանաստեղծ, և
այլ յայտնի գրագէտներ, բժիշկներ, փաճառ-
կաններ, ինչպէս Ջուրապ, Շաշեան, Հաճիպար,
Նուրիսան, Աղաբեան, Հէրիսեան, Սինապեան և
այլն:—Երեսփոխանների 14-ին երեսփոխանական
ժողովը բացվեց Աղաբեան պատրիարքի նախա-

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13